



1967-Ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՈՒ ՍՐԱՀԻ ԲԱՅՈՒՄ...

1967-ի շրջանաւարտ դասարանը, 2017-ին Լիբանանի մէջ ունեցաւ իր դասարանային վերահաւաքը: Այդ առթիւ, անոնք փափաք յայտնեցին որդեգրել ծրագիր մը ՀԱԳ-ի մէջ, որ առաւելաբար միտէր աշակերտութեան մատուցուող ծառայութեանց բարելաւմին: Դոկտ. Իւրնէշլեանի ներկայացուցած առաջարկներէն անոնք ընտրեցին 6-րդ յարկին վրայ գտնուող լսատեսողական սրահի ամբողջական նորոգութիւնը եւ արհեստագիտական միջոցներով օժտումը, որպէսզի անիկա ծառայէր հեռավար դասընթացներու, ատենամարզանքներու եւ այլն: Պահանջուած գումարին ապահովումէն եւ հարկ եղած կարգադրութիւնները տնօրինելէ ետք, 14 Մայիսին սկսաւ վերանորոգումը, սիրայօժար հսկողութեամբ դպրոցիս շրջանաւարտ Եղիկ Թորոսեանի (1995):

Աշխատանքներուն բարեյաջող աւարտէն ետք, 17 Յունիսին տեղի ունեցաւ սրահին բացումը, որ կոչուեցաւ **1967-Ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՈՒ ՍՐԱՀ** կամ **CLASS OF 67 MULTIPURPOSE AV HALL:**

Այս առթիւ զետեղուեցաւ նաեւ 1967-ի դասարանի շրջանաւարտներուն խմբային լուսանկարը եւ անուանացանկը կրող յուշատախտակ մը:

Յատուր պատշաճի ելոյթ ունեցան տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեան եւ պր. Ն. Պաղտոյեան: Իսկ նաակատիքի աղօթք մատուցեց վեր. Հրայր Զոլագեան:

Այս առթիւ պր. Պաղտոյեան յուշանուէրով մը պատուեց պր. Եղիկ Թորոսեանը, որ սիրայօժար ծրագրեց եւ գործադրեց վերանորոգումի աշխատանքը, միաժամանակ սրահին նուիրելով ցուցադրութեան յատուկ սարք մը՝ Camera for interactive projection:

... ԿԱՅՔԻ ՄԵԿՆԱՐԿ...

Նոյն միջոցին, 1967-ի շրջանաւարտներու սրահին մէջ պաշտօնապէս մեկնարկեց ՀԱԳ-ի պաշտօնական կայքը՝ aecbeirut.edu.lb, պատրաստութեամբ 2012-ի շրջանաւարտ Զաւէն Լեւիեճեանի:



... ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԿԱԶՄԻ ԵՐԱԽՏԻՔ

17 Յունիսը նաեւ օր էր երախտիքի, ուղղուած ՀԱԳ Տիկնանց օժանդակ յանձնախումբի հիմնադիր կազմի տիկիններուն, որոնցմէ շատեր աւելի քան քսանամեակ մը սիրայօժար ծառայած են դպրոցին, առաւելաբար քաֆեթերիային միջոցով աշակերտներուն մատուցուած որակաւոր ծառայութեամբ եւ հասութաբեր այլ ձեռնարկներով: Իրենց աշխատանքին հասոյթով տիկինները դպրոցէն ներս ծաւալած են վերանորոգութիւններու եւ անհրաժեշտ կարասիներու գնման աշխատանքներ: ՀԱԳ Հոգաբարձութիւնը, առ ի երախտիք Տիկնանց այդ կազմին, դպրոցի մուտքին զետեղեց յուշատախտակ մը, որուն բացումը կատարեցին տիկնայք Միմի Էքմէքճի եւ Արուս Լեպլեպճեան եւ հոգաբարձութեան ատենապետ պր. Ներսէս Պաղտոյեան:



ԲԱՐԵՐԱՐ ՀՐԱՉ ՍԻՍԵՌԵԱՆ 15,000 ՏՈԼԱՐ ԿԸ ՆՈՒՐԷ ՀԱԳ-ԻՆ

Փարիզաբնակ երկարամեայ նախկին աշակերտ, դպրոցի բարերարներէն տիար Հրաչ Սիսեռեան, իր ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեաններու յիշատակին իր տարեկան յատկացումը՝ 15,000 ամ. տոլար, փոխանցեց դպրոց 2017-2018 տարեշրջանին համար:

Մեր յարուկ շնորհակալութիւնները:

ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿՆԵՐ ԵՒ ԴԷՊԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ (100-5)

ԱՐՄԷՆ ԻՐՆԵՆԵԱՆ

Նախորդ քանի մը տարիները հարիրամեակներու տարիներ էին:

Շարքը սկսաւ 2015-ին, երբ ազգովին ոգեկոչեցինք մեր նահատակները եւ վերանորոգեցինք մեր ազգային պահանջատիրութիւնը:

Այս տարի կը նշենք Սարգսյանի ազգամարտին եւ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան հարիրամեակը:

2015-էն 2018, ցաւի ու պահանջատիրութեան հարիրամեակին յաջորդեց յաղթանակի ու արժանապատուութեան վերականգնումի հարիրամեակը:

Հինգ տարիէն, Հայ Աւետարանական Գոլէճը պիտի նշէ իր հիմնադրութեան հարիրամեակը: Արդարեւ, յետեղեռնեան հայ սփիւռքի առաջին հայկական բարձրագոյն վարժարանին հարիրամեակը, բնականաբար պիտի չունենայ նախորդներուն համազգային հնչեղութիւնն ու շքեղութիւնը: Սակայն, սփիւռքի մաշող ու մաշեցնող հեւքին դիմաց թամբ կանգնող հիմնական հաստատութիւնը հայ դպրոցն է, որ քայլ պահելով ժամանակի թաւալումին հետ, յարմարելով նոր պայմաններուն, պիտի գտնէ՝ ոգեկան ու ֆիզիքական ներուժ՝ ինքնավերանորոգելու եւ իր հերթին՝ վերանորոգելու իր լոյսին դիմող սերունդները: Այլ կերպ չի՝ կրնար ըլլալ: Պէտք չէ՝ ըլլայ:

Այս վճռակամութեամբ կը փակենք ՀԱԳ-ի պատմութեան իննսունհինգերորդ տարին, մեր հայեացքը ուղղելով դէպի Հայ Սփիւռքի յարատեւման խորհրդանշող ՀԱԳ-ի հարիրամեակը, որ երրորդ օղակն է պահանջատիրութեան եւ արժանապատուութեան վերականգնումի շղթային:

ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ



23 Մայիսին ՀԱԳ Ծնողաց մարմինը Brunch-ի հիրասիրութեամբ նշեց «Մայրերու Օր»-ը, ներկայութեամբ ծնողներու եւ հիւրերու: Ատենապետուի տիկին Կարինէ Չոլագեանի բացման խօսքին յաջորդեց խիստ շահեկան մանկավարժական դասախօսութիւն մը, «Տունի մթնոլորտը քննութիւններու նախօրեակին» նիւթով, որ ներկայացուց մանկավարժութեան դասախօս տիկին Շադիկ Գանտահարեան-Խիւտավերտեան: Տնօրէնին շնորհակալութեան եւ բարի գալուստի խօսքէն ետք, դպրոցի տարբեր դասարաններու աշակերտներ ներկայացուցին գեղարուեստական կոկիկ յայտագիր մը:

Վարձքը կատար բոլոր տիկիններուն եւ յայտագիրը պատրաստած ուսուցչուհիներուն:



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԵՃ

Հիմնուած 1923-ին

www.aecbeirut.edu.lb

Հայկազեան Համալսարանին կից

Հեռ.՝ 01-349816

Ե-նամակ՝ secretary@aecbeirut.edu.lb

2018 - 2019

96-ԴԴ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՏ

Քաղաքի Հայ Աւետ. Գոլէճը կը շարունակէ ընդունիլ **ծիլէն մինչեւ 12-րդ դասարան** դիմող աշակերտներ:

Նորեկ աշակերտներուն դիմումները կ'ընդունուին Յունիս, Յուլիս եւ Սեպտեմբեր ամիսներուն, երկուշաբթիէն Ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 8:30-էն 12:00, նախընտրաբար ժամադրութեամբ:

Կրթանպաստ պիտի տրամադրուի ուսումնապէս փայլուն, բայց նիւթապէս կարիքաւոր աշակերտներու:

Մուտքի քննութիւնները պիտի կատարուին 4 - 6 Յուլիս եւ 4 - 6 Սեպտեմբեր:

Փոխադրամիջոցներ ապահովուած են ԲՈԼՈՐ շրջաններուն համար:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

**ԱՅՅԵԼԵՑԷՔ
ԵՒ ԲԱԺՆԵԿՑԵՑԷՔ**

www.aecbeirut.edu.lb

Sponsored by
**Law Offices of A. Abboud
& Associates**

| ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՏԵՆԱՄԱՐԶԱՆՔ



11 Մայիսի միացեալ ատենամարզանքին, 17 աշակերտներ ցուցաբերեցին իրենց երաժշտական ծիրքերը, դաշնամուրի, ջութակի եւ կիթառի վրայ ելոյթ ունենալով, իրաքանչիւրը իր մակարդակին համաձայն հմտութիւն եւ շնորհք ցուցաբերելով: Նշենք թէ սոյն ատենամարզանքին կ'որոշուի «ՀԱԳ Սոնա Ահարոնեան երաժշտական մրցանակ»ի դափնեկիրը:

| ԳԵՂԱՐՈՒԵՏՏԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ | ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՒ ԵԼՈՅԹՆԵՐ



19 Մայիս 2018-ին տեղի ունեցաւ աշակերտական գեղարուեստական ստեղծագործութիւններու, ձեռնային աշխատանքներու եւ դասարանային project-ներու ցուցահանդէս: Նոյն օրը, երգով, պարով ու նուագով ելոյթ ունեցան նաեւ մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտներ:

| ԸՆԿԵՐԱՅԻՆ ՊՏՈՅՏ



19 Մայիսին ՀԱԳ Տիկնանց ընկերային յանձնախումբը կազմակերպած էր պտոյտ մը դէպի Ֆարայայի շրջանի կրօնական եւ տեսարժան վայրերը: Հարիւրի հասնող մասնակիցները անցուցին հաճելի ոգտակարին միացուցած օր մը, վայելելով յանձնախումբի նուիրեալ անդամներուն հիւրընկալութիւնը:

| ՀԱՐԻՐԱՄԵՆԱԿԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԱՐԱԹՈՆ

20 Մայիս 2018-ին, Հայաստանի հանրապետութեան հիմնադրութեան հարիւրամեակին առթիւ, համագաղութային մարմինի կազմակերպած մարաթոնին մասնակցեցան նաեւ մեր աշակերտները:

ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ



13 ԱՊՐԻԼԻՆ, տիկին Սելիա Խաթէր-Սաուան, ՀԱԳ-ի ծնողաց ներկայացուց իրատապ եւ այժմեական նիւթով խիստ շահեկան դասախօսութիւն մը, համակարգչային վայրագ խաղերու եւ երեխաներու հոգեբանութեան ու վարուելակերպին վրայ անոնց ունեցած վտանգաւոր ազդեցութեան մասին:

ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

Մասնագիտական վերապատրաստումի եւ յարաբերութեան բնաբանով, ՀԱԳ-ի ուսուցիչները մասնակցեցան հետեւեալ սեմինարներուն.

- ▷ “Conflict Management in Schools”, կազմակերպութեամբ WAZNAT հաստատութեան եւ Հայկազեան Համալսարանին, վարիչ՝ պր. Սամիր Քոսթանթին, 4 Ապրիլ 2018-ին:



- ▷ “Bullying in Schools”, կազմակերպութեամբ հայ աւետ. Թորոսեան վարժարանին, վարիչ՝ փրոֆ. Շահէ Քազարեան, 11 Մայիս 2018-ին:



- ▷ Գալուստ Կիվայէնկեան Հիմնարկութեան «Լիբանանահայ վարժարաններու ուսուցիչներու մասնագիտական մշակում» սեմինարին (Սեպտեմբեր 2017 – Մայիս 2018) ի շարս այլ դպրոցներու, ՀԱԳ-էն մասնակցեցան տիկնայք Անգինէ Օպէյտ, Զարմինէ Ասմինեան, Հոութ Եունիսէս, Նուարդ Ղորղորեան եւ պր. Նժդէհ Մխսեան:




ՀԱՅ ԱՌԵՏ. ԳՈԼԷՃԻ ԻՆՆՍՈՒՆԵՐՈՐԴ ՀՈՒՆՁՔԸ

ՄԵՐ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ



Ռըպա Աթուէ
Փերլա Պասէթ
Գաթրինա Տումանեան
Կէրի Լեփեճեան
Սերժ Թերզեան



ՎԱՍԱՅ ԶԱՅՆԻ
«ՃԻՇԴ ՀՆՉԵՆՔ» ՄՐՑԱՆՔ
Նարէ Գարամանուկեան (Բ.)



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ
ՄՐՑԱՆՔ


Անտրէա Տէմիրճեան (Գ.)
Հրակ Կարապետեան եւ
Նարեկ Չոլագեան
(յիշատակութիւն)

ՀԲԸՄ-Ի «ԽՍՕՄՆԱԿ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ
ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆՔ
Ղազար Մեսճեան (6-րդ)
Արին Պաստաճեան (5-րդ)
եւ Լանա Սայիլեան (5-րդ)



9-րդ դասարանի աշակերտուհի Գառնի Քէօշկերեանի շարադրութիւնը՝ «Տեսիլքը», ընդգրկուած է ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հրապարակած «Սարդարապատից Արցախ» եռալեզու ժողովածուին մէջ, ուր լոյս տեսած են համահայկական մրցանքին լուսագոյն շարադրական աշխատանքները:



ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ



Սէրլի Ինճէան
Ղազար Մեսճեան
Մանէ Չոլագեան
Նժդէհ Պալեան
Արմինէ Քէշիշեան






Կարէն Թերզեան

Սեւակ Ինճէան

Նաթալի Նասիֆ

Վանի Նորշահեան



Ճիովաննի Սալպաշեան

Լունա Քէշիշեան

Նարի Քէօշկերեան

Ռաֆայել Ֆրանսիս

► 1964-ի շրջանաւարտ Դ ւ ր տ ա - րապետ Ժաք Էքմէքճիի նկարը գետնորում է Ապրիլ 2018-ի «Business Life» տարեգիրքի կողքին: Ան լատենտոական կրթական արդիական ծրագրի մը հեղինակն է: Գրութիւնը կ'անդրադառնայ այդ ծրագրին եւ անոր հեղինակին:



► 1964-ի շրջանաւարտ, քանադացի, հրապարակագիր, վաստակաւոր կրթական մշակ Պարոյր Աղպաշեան, 12 Մարտ 2018-ին ՀԲԸՄ-ի «Ժօնակ» ամսագրի 60-ամեակի հանդիսութեան ընթացքին (Տեմիքնեան կեդրոն), իբր նախկին խմբագիրներէն մին, արժանացաւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետի շքանշանին: Շքանշանը յանձնեց Սփիւքի նախարար Հրանտ Զակոբեան:



► 1978-ի շրջանաւարտ, Լոս Անճելոսաբնակ Վիգէն Գրաճեան եւ կինը՝ Մարալ, մեկնաւ Կալիֆոռնիա, որպէս հանդիսացած են բազմավաստակ արձակագիր Սարգիս Վահագնի «Հաճընը Սիրուն» վեպին, որ լոյս տեսած է 2017-ին:

► Լիբանանի հայոց թեմի Ազգային երեսփոխանական ժողովի 2018 տարեշրջանի ք. նիստին՝ 10 Ապրիլ 2018-ին, երկարամեայ նախկին աշակերտ տոքթ. Էլի Թաշճեան Ազգ. վարչութեան քաղաքական ժողովի անդամ ընտրուած է:

► 1967-ի շրջանաւարտ Ատոմ Թանուկեան, 7 Ապրիլ 2018-ին Աղբալեան-ՀՄԸՄ մարզամշակութային համալիրին մէջ «Ատոմ եւ Սելա Թանուկեան» պատկերապոլի եւ մինի-ֆութպոլի վերանորոգուած մարզադաշտներուն



բարերար հանդիսացած է տիկնոջ հետ: Ձեռնարկի ընթացքին ՀՄԸՄ-ը բարերար զոյգը պատուած է յուշատախտակով:

► 1965-ի շրջանաւարտ Յովիկ Բիրքճեան եւ իր կինը՝ Մարալ (1966-ի շրջանաւարտ), 8 Մարտ 2018-ին հովանաւորեցին Թէքէեան Մշակութային Միութեան «8 Women Art from the Heart» գեղարուեստական ցուցահանդէսը:

► 1975-ի շրջանաւարտ տոքթ. Պերճ Տաքէսեան Լիբանանահայ բժշկական միութեան վարչութեան անդամ ընտրուած է 28 Փետրուար 2018-ին:

► Երկարամեայ նախկին աշակերտ, Ռատիօ Մեանի տնօրէն եւ ՌԱԿ-ի Լիբանանի շրջ. վարչութեան փոխ-ատենապետ Միքայէլ Վայճեան 20 Փետրուար 2018-ին անդամ նշանակուած է ՀԲԸՄ-ի Լիբանանի շրջանակային յանձնաժողովին:



► Համազգային մշակութային ընկերակցութեան Լիբանանի շրջանային վարչութեան անդամ ընտրուած է երկարամեայ նախկին աշակերտ, Հայկազեան համալսարանի պաշտօնեաներէն Երուանդ Պապիկեան, ըստ Համազգայինի 13 Մարտ 2018-ի հաղորդագրութեան:

► 2015-ի շրջանաւարտ Ծուշան Քէշիշեան դեր վերցնոց ՀԲԸՄ-ՀԵԸ-ի Վահրամ Փափազեան թատերախումբի



Վարդան Մկրտիչեանի բեմադրած Յ. Պարոնեանի «Քաղաքավարութեան Վնասներ» թատերգութեան մէջ, որ ներկայացուեցաւ Յ. Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ (9, 10, 11, 16, 17 եւ 18 Մարտ 2018-ին): Ան շնորհալի խաղարկութիւն ցուցաբերեց:




► ՀՀ Գիտութիւն եւ Ինքնազգային ակադեմիայի հրաւերով, 1955-ի շրջանաւարտ,

ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն, պատմաբան եւ ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ՝ դոկտ. Զաէն Մարդեան, մասնակցեցաւ Ակադեմիայի Հայագիտութեան եւ հասարակական գիտութիւններու բաժանմունքի 27 Մարտ 2018-ի նիստին, որ տեղի ունեցաւ Ակադեմիայի Պատմութեան հիմնարկի նիստերու դահլիճին մէջ: Դոկտ. Մարդեան զեկուցում ներկայացուց «Քեմալական Թուրքիոյ ցեղասպան քաղաքականութիւնը Հայոց նկատմամբ (1919-1942 թուականներուն)» նիւթին շուրջ:

► 1982-ի շրջանաւարտ, հայրենաբնակ Յովիկ Ստեփանեան Հայաստանի մէջ լծուած է գիտատնտեսական զբօսաշրջութեան գործին: 2017-ին, ՀՀ կառավարութիւնը վաւերացուցած է անոր երկու ծրագիրները՝ «Զբօսաշրջութիւն աւանդական գիտատեխնիկ ինքնաբաւ համայնքի մէջ» եւ «Գեղ Աստղ»։ Ծրագիրները կը գործեն Վայոց Ձորի եւ Գեղարքունիքի մէջ:

► 2015-ի շրջանաւարտ Յովիկ Արթինեան Լիբանանեան Ամերիկեան Համալսարանի «Արտասահման ուսանիր» ծրագրի գծով Նիւ Եորքի Institute of Technology-ի մէջ ուսանեցաւ, արժանացած ըլլալով Ժողով Անտի կրթանապատին:





► 15 Ապրիլ 2018-ին, Ուրֆայի Հայրենակցական Միության Տան մէջ տեղի ունեցաւ 2003-ի շրջանաւարտ Շուշան Արթինեան-Թոգաթեանի մեծ հօր եւ մեծ մօր նուիրում «My Grandparent's Odyssey: From Urfa and Germir to Beirut» գիրքին: Գիրքը արժանացած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ռիչըրտ եւ Թինա Գարոլան մրցանակին, որուն դատակազմին ատենապետն է դոկտ. Զաւէն Մարրիան: Գիրքին հրատարակութեան խմբագիրն էր դոկտ. Արմէն Իւրնէշեան:

► 1955-ի շրջանաւարտուի, վաստակաւոր կրթական մշակ Ազատուի Սիմոնեան մասնակցեցաւ 12-13 Ապրիլին Գահիրէի մէջ Հայկազեան համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի կազմակերպած «Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ հայերը» գիտաժողովին: Ան, անգլերէնով զեկուցեց «Եգիպտահայ Արտեմիսը, իբրեւ կնոջական խնդիրներու յառաջապահ մամուլ» նիւթին մասին:

► Տիկ. Ազատուի Սիմոնեան Սր. Էջմիածնի Կրօնասէր տիկնաւոց համախմբումի 58-ամեակի հանդիսութիւն հացկերոյթին, որ տեղի ունեցաւ 29 Ապրիլ 2018-ին, ՀԲԸՄ-ի Տեմիրճեան կեդրոնին մէջ, արժանացաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի «Օրհնութեան գիր»ին իր 45-ամեայ միութենական ծառայութեան համար: Օրհնութեան գիրը կարդաց Դամասկոսի թեմի առաջնորդ Արմաշ եպս. Նալպանտեան:



► Նոյն ձեռնարկին, 1980-ի շրջանաւարտ Մարինա Սարաֆեան 35 տարիներու միութենական ծառայութեան գնահատագիր ստացաւ:

► 18 Ապրիլին 1977-1978 տարիներու շրջանաւարտներ եւ նախկին աշակերտներ Ռիմա Գալֆայեան-Պիշուրի, Լեոն Աֆէեան, Լենա Թէքեան, Մանօ Խաչատուրեան, Ռաֆֆի Ճահիլեան, Հերա Նորաշխարհեան-Պոյաճեան, Սենտի Նազարեան-Պալոզեան, Նինա




Տէրմենճեան-Սանասեան, Գրիգոր Չամիչեան, Աւօ Թիւթինճեան, Տօրին Էթեմզեան-Տազեան, Ժիլիէթ Աֆարեան եւ Փոլին Տոթումեան, Նիւ Եորքի մէջ վերահաւաք մը ունեցան, յիշատակներով լի ուրախ ժամանակ մը անցընելով:

► ՀՅԴ Արեւմտ. Ամերիկայի Կեդր. կոմիտէն Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակը նշեց գիտաժողովով մը, 5 - 6 Մայիս 2018-ին, Նորթրիճի Քալիֆօրնիոյ նահանգային համալսարանին մէջ, հովանաւորութեամբ համալսարանի հայագիտական ամպիոնին եւ տնօրէնութեամբ Հայկական բաժնի տնօրէն, 1969-ի շրջանաւարտ պատմաբան դոկտ. Վահրամ Շէմասեանի:

► 2014-ի շրջանաւարտ Արագ Տէմիրճեան, որ Պէյրութի Ամերիկեան համալսարանի ճարտարապետութեան դպրոցի ուսանողուի է, արժանացած է տեսչական պատուոյ ցանկի գնահատագրին, իր ուսումնական փայլուն արդիւնքներուն համար:

► 2007-ի շրջանաւարտ Մարիա Փալազեան-Բարսեղեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Շնորհալի» եւ «Արմաշ» երգչախումբերու 29 Ապրիլ 2018-ին

† 1983-ի շրջանաւարտ Մինաս Ասագեան (1963-2018), երկար տարիներ Տուպայի մէջ համակարգիչի գործին մէջ եղած, մահացաւ 15 Յունիս 2018-ին, Պէյրութի մէջ, յետ անողորմ հիւանդութեան: Ան 2013-ին գլխաւոր մասնակիցներէն էր ՀԱԳ-ի լուսանկարչական ցուցահանդէսին:



† 24 Ապրիլ 2018-ին, յետ երկարաւրել հիւանդութեան, Պէյրութի մէջ մահացաւ 1960-ի շրջանաւարտ Սօսի Լաւիաճեան-Վարդան (1942 - 2018): Հանգուցեալը երկար տարիներ աշխատած էր American Life Insurance Company-ին մէջ:



† 13 Ապրիլ 2018-ին, Փարիզի մէջ յանկարծամահ եղած է 1964-ի շրջանաւարտ Գեղամ Գարճեան (1945-2018): Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, իսկ Քառասունքի յիշատակի պաշտամունքը՝ Պէյրութի Հայ Աւետ. Ա. եկեղեցիին մէջ:



Ազգային միացեալ վարժարանի սրահին մէջ տեղի ունեցած համերգին, դաշնամուրով ընկերակցած է խմբերգերուն:

► Համացանցէն կը տեղեկանանք, որ 1974-ի շրջանաւարտ Վահէ Բէօշկեան, որ Երեւանի մէջ գինեգործութեան հարցերու մասնագէտ է, եւ տնօրէն՝ Semina Consulting ընկերութեան, Հայաստանի Հանրապետութեան նորանշանակ Սփիւռքի նախարարին խորհրդական նշանակուած է:





ԱՆԹԻԼԻԱՍ – Մեծ եղեռնի
ոգեկոչման աշակերտական
հանդիսություն



Աշակերտները կը տօնեն Սարգարապատի
և Հայաստանի Ա. հանրապետության տօները



Նոր ՓԹԻԹ-ը ստացանք
և անհամբեր ենք...



Ս. ԳԻՐՔԻ ԱԿՈՒՄՐ –
Պտոյտ Պայթումն էի Շեքսպ



ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄՐ – Հայկական ֆիլմեր՝ «Պատկեր»ի մէջ



Մանկապարտէզը Kid Mondo-ի մէջ



Մեր աշակերտները
Թորոսեան դպրոցի քերմէսին



Flashmob – Beirut Souks
5-րդը կը մասնակցի «Արի պարենք Քոչարի»
համահայկական flashmob-ին



Ուսուցիչներու պտոյտ – Այնճար

Վերջին Զանգ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

▷ Մեր Մարինա Տէմիրճեան, անձնական նախաձեռնութեամբ, 16 Մարտին եւ 27 Ապրիլին, խօսեցաւ 9 - 12 կարգերու աշակերտներուն խօսքի ազատութեան իրաւունքներուն եւ սահմանափակումներուն մասին, յատկապէս ընկերային ցանցերու միջոցով:



Շնորհակալութիւն կը յայտնենք փաստաբանուհիին, որ իր բազմազաղ առօրեային մէջ ժամանակ տրամադրեց մեր աշակերտներուն: Ըսենք որ Մեր Տէմիրճեան, համացանցային Mariam TV-էն նոյնպէս հանդէս կու գայ բարոյագիտական զրոյցներով:

▷ 2015-ի շրջանաւարտ Շուշան Քեշիշեան, ամբողջ տարեշրջանին ընթացքին, սիրայօժար ծառայութեամբ ՀԱԳ-ի 5-րդ դասարանին հետ շաբաթական երկու պահ դրութեամբ վարեց արուեստի վերաբերող զանազան դասընթացքներ, տեսական եւ գործնական մօտեցումով:

Շնորհակալութիւն կը յայտնենք մեր սիրելի շրջանաւարտին, որ հակառակ ուսանողական զբաղումներուն, առիթ գտաւ ծառայելու իր դպրոցին: Կը մաղթենք որ օրը. Շուշանին այս ժեսթը օրինակելի դառնայ բոլոր շրջանաւարտներուն, որ իրենց ժամանակին, կարողութեան ու մասնագիտութեանց սահմաններուն մէջ ծառայութեան դաշտ մը նկատեն իրենց Մայր Կրթարանը:

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

2017-2018 տարեշրջանին Լիբանանի տարբեր համալսարաններէ շրջանաւարտ եղան ՀԱԳ-ի նախկին աշակերտներէն հետեւեալները.

ԳԱՅՄԱԳԱՍԵԱՆ ՅՈՒՇԻԿ (LAU) PS & International Affairs	
ԷՔՄԵՔՃԻ ԲԷԱ (AUB)	Environmental Health
ԽԱԹԻՊ ՍԼԵՅՄԱՆ (AUB)	Mechanical Engineering
ՉԻԼԻԿԻՐԵԱՆ ԺԱՆ (LAU)	Computer Engineering
ՓԱՓԱԶԵԱՆ ՆԱԼՈՐ (Haigazian)	Business Administration
ՔԵՇԻՇԵԱՆ ՇՈՒՇԱՆ (LAU)	PS & International Affairs

ՇՈՒՇԱՆ ՔԵՇԻՇԵԱՆ Լիբանանի Ամերիկեան Համալսարանը աւարտեց բարձրագոյն ընդհանուր միջինով, ապահովելով 4/4 GPA: Ան ստացաւ նաեւ համալսարանին ամենապատուաբեր մրցանակներէն՝ Presidents' Award-ը, իր ակադեմական եւ արտադասարանային բացառիկ ձեռքբերումներուն համար:

Կը շնորհաւորենք մեր սիրելի շրջանաւարտներուն ուսումնական նուաճումը եւ բոլորին կը մաղթենք յաջողութիւն իրենց ապագայի ծրագիրներուն մէջ:

ՆՈՒԻՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆՆԵՐ

▶ Հայ Աւետ. Ա. եկեղեցին դպրոցին փոխանցեց ՍԱՐԳԻՍ ԵՒ ԲԻԻԶԱՆԴ ՀԱՍՏՐՃԵԱՆ ՖՈՆՏԻ 2017 տարուան հասոյթը՝ 700,000 Լ.Ո.:

▶ Սան Ֆրանսիսքոյէն Ռաֆֆի եւ Շողիկ Թիւթինճեաններ, իրենց մօր՝ նորոգ հանգուցեալ Մարի Յովհաննէսեան-Թիւթինճեանի յիշատակին, 500,000 Լ.Ո. կը յատկացնեն ՀԱԳ-ին, իբրեւ հայ գրականութեան մրցանակ:

Շնորհակալութիւն նուիրաւորներուն:
Տիկին Մարին յիշատակը անթառամ մնայ:

▶ 1967-ի շրջանաւարտներու սրահի վերանորոգութեան նպատակով, տիկին Տալիտա Վարդանեան-Իսկենտերեան (Ձուիցերիա) կը նուիրէ 400 զուիցերիական ֆրանք:

«ՀԱԳ ԴՈԿՏ. ԶԱԽԵՆ ՄԱՐԿԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏ»ԻՆ

ԿԱՏԱՐՈՒԱԾ ՆՈՒԻՐԱՏՈՒՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ...

ՀԱՍՏՈՒ-ի նախորդ թիւէն ետք շնորհակալութեամբ խորացանք հետեւեալ նուիրաւորութիւնները, ուղղակի դպրոցին:

Ամ. Տոլար

Տիար Վիգէն Գարճեան (ԱՄՆ)	1500
Տիար Շահէ Խաչատուրեան (Լիբանան)	1000
Տիկ. Սիլվա Պարութեան-Թաշճեան (ԱՄՆ)	300
Տիար Փօլ Քարլոզեան (ԱՄՆ)	300
Տիար Գէորգ Ճէպէճեան (Լիբանան)	200
Տէր եւ Տիկ. Մորիս եւ Պերճուհի Կիլեսերեան	200
Տիար Յովիկ Ստեփանեան (Հայաստան)	100
Տիար Պետիկ Գահվէճեան (Գանատա)	92
Տիկ. Մելինէ Մերճանեան (ԱՄՆ)	50

Իսկ հետեւեալ նուիրաւորութիւնները կատարուած են Ամերիկայի Արեւմտեան Ափի ՀԱԳ-ի Շրջ. Միութեան ճամբով, որ շուրջով դպրոց պիտի փոխանցէ:

Տիար Սարգիս Պետեւեան	1000
Ստեփան Փիլիպոսեան հիմնարկութիւն	1000
Տիկ. Անայիս Պարսումեան	500
Տիար Վարդգէս Աբելեան	500
Տիար Զարմայր Սեդրակեան	250
Տիկ. Արփի Պաքճեան-Սանսուր	200
Տիկ. Շուշան Գալայեան-Սամման	100
Տիար Մայք Տիշաքճեան	100

Խմբագիր՝
Խորհրդատուներ՝
Էջաղում՝
Մ.Ա.Յ.Ա.Ե. Միութեան Հոսանքային Գրասենեակ

ՏՈՐԵՆ ԴՈԿՏ. ԱՐԶԵՆ ԻՐԱԵՇԵԱՆ
Տիար ՆԵՐՍԵՍ ՊԱՏՈՅԵԱՆ
Տիար ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
ԱՆԻ ՔԵՍԵՆԵԱՆ-ՊԱՍԵՐ

Y.M. Philibossian Armenian Evangelical College
P.O. Box 3672-Beirut
Tel: 01 349 816 Fax: 01 751 469
E-mail: A_E_C@cyberia.net.lb